ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 278 –Ա

«ՆՈՌՆԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՐՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՔՐԻՍՏԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 1-ի N20 աշխատանքային պայմանագրի 2.1.1 կետի 22-րդ ենթակետը և նույն կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ա. Ստեփանյանի դիմումը՝

ո ր ո շ ում ե մ.

1. 2026 թվականի հունիսի 12-ից լուծել «Նռնաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող (այսուհետ՝ Համակարգող) Արտուր Ստեփանյանի հետ 2024 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված N 20 աշխատանքային պայմանագիրը:

2. «Նռնաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության Համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Ստեփանյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության Համակարգողի պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2026-06-11 15:29:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ

Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026թ. հունիսի 11
ք. Կապան